Հաշվետվություն

Ս. թ. հուլիսի 17-ից 21-ը Մանիլայում (Ֆիլիպինների Հանրապետություն) կայացած Ասիական զարգացման բանկի պիլոտային ծրագրի արդյունքների քննարկման և նոր ծրագրերի գաղափարների առաջարկման վերաբերյալ միջազգային աշխատաժողովի մասնակցության վերաբերյալ

1. Անունը, ազգանունը

Հայկարամ Մխիթարյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ֆիլիպինների Հանրապետություն, քաղաք Մանիլա, ս.թ. հուլիսի 17-ից 21-ը

4. Հրավիրող կողմը

Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Տիեզերահեն և հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառմամբ աղետների կայունության ամրապնդման տեխնիկական աջակցության» տարածաշրջանային աշխատաժողովին:

6. Քննարկման թեմաները

Պիլոտային ծրագրի ամփոփում և նոր ծրագրերի քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովի բացմանը ՀՀ ԱԻ նախարարության պատվիրակության կողմից պաշտոնական ելույթով հանդես եկա ես: Ելույթ ունեցան նաև Ասիական տեխնոլոգիաների ինստիտուտի երկրատեղեկատվական

կենտրոնի տնօրենը, Ճապոնիայի հեռահար զոնդավորման կենտրոնի տնօրենը, Ֆիլիպինների, Ֆիջեի և Բանգլադեշի արտակարգ իրավիճակների գծով պետական պատասխանատուները: Քննարկվեցին պիլոտային ծրագրի կիրառման մանրամասները, անհատական փորձի արդյունքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ավարտին ձեռք բերվեց պայմանավորվածություն ստորագրելու փոխըմբռնման հուշագիր Տեխնոլոգիաների ասիական ինստիտուտի և ՀՀ ԱԻ նախարարության միջև համագործակցության վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվեց ՀՀ ԱԻ նախարարության հետ շարունակական համագործակցության շրջանակներում սկսել տիեզերական հենքով տեխնոլոգիաների ուսուցման ծրագիր ՀՀ ԱԻՆ մարզային կառույցների աշխատակիցներին և ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի ուսանողներին, որը կհանդիսանա ավարտված պիլոտային ծարագրի շարունակությունը և կնպաստի համակարգչային տեխնիկայով և անօդաչու թռչող սարքերով նախարարության հարստացմանը:

10. Գործուղվողը

Հայկարամ Մխիթարյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

25.07.2017թ.